29.09.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 28-ի N 1592 - Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԴ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ռազմավարական պաշարների պահուստների նյութական արժեքներն այլ կազմակերպություններին կամ սպառողներին տրամադրման դեպքում այդ ապրանքների արժեքի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում կիրառված հասկացությունները գործածվում են «Նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հասկացությունների իմաստով:

3. Բնակչության և Զինված ուժերի կենսապահովման նպատակով ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքները Կառավարության համապատասխան որոշման համաձայն կարող են՝

1) իրացվել այդ ապրանքների սեփականատեր կազմակերպությունների կողմից՝ ազատ վաճառքի եղանակով.

2) հանձնվել Կառավարության կողմից սահմանված կազմակերպություններին կամ սպառողներին՝ բնակչության նորմավորված մատակարարումը կազմակերպելու համար:

4. Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացվող ապրանքները սահմանված կարգով այլ կազմակերպություններին կամ սպառողներին հանձնելու դեպքում այդ ապրանքների սեփականատեր կազմակերպություններին նշված ապրանքների արժեքը հատուցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից:

5. Յուրաքանչյուր կազմակերպության համար ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների հատուցման գումարը հաշվարկվում է լիազոր մարմնի կողմից՝ ելնելով վերջին 12 ամսվա ընթացքում այդ կազմակերպության կողմից ներկրված՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված նույն տեսակի ապրանքի

միջին կշռված գնից, իսկ վերամշակման արդյունքում ստացվող ապրանքներն այլ կազմակերպություններին կամ սպառողներին հանձնելու դեպքում՝ նաև վերամշակման նպատակով կազմակերպության կողմից կատարված աշխատանքների արժեքից:

6. Ռազմավարական պաշարներն այլ կազմակերպություններին կամ սպառողներին հանձնելիս կազմվում է եռակողմ հանձնման-ընդունման ակտ՝ համաձայն ձևի, որը ստորագրվում է Ռազմավարական պաշարների պահուստների նյութական արժեքները հանձնող կազմակերպության, ընդունող կազմակերպության կամ սպառողի և լիազոր մարմնի պաշտոնատար անձանց կողմից:

7. Փոխհատուցում ստանալու նպատակով Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքներն այլ կազմակերպությանը կամ սպառողին հանձնած կազմակերպությունը լիազոր մարմին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հաշվարկային փաստաթուղթ:

8. Ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների փոխհատուցման ժամկետը չի կարող գերազանցել 60 աշխատանքային օրը, եթե ռազմական դրություն չի հայտարարվել:

9. Ռազմական դրություն հայտարարելու դեպքում՝ ռազմավարական պաշարների պահուստի նյութական արժեքների հատուցման ժամկետը կարող է երկարաձգվել՝ մինչև ռազմական դրության ավարտին հաջորդող 60-րդ աշխատանքային օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Ձև

ԱԿՏ N_____
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻՆ
ՀԱՆՁՆՄԱՆ–ԸՆԴՈՒՆՄԱՆ

__ _____ 202__ թ.

Լիազոր մարմնի 20__ թ._____ ___-ի N_____ կարգագրի հիման վրա _____ կողմից _____ հանձնված
(հանձնող կազմակերպության անվանումը) (ընդունող կազմակերպության անվանումը)

ռազմավարական պաշարների նյութական արժեքների՝

NN	Նյութական արժեքների անվանումները	Տեսակը	Չափի միավորը	Քանակը	Ծանոթություն
1					
2					
3					
4					

Քանակը (կշիռ կամ հատ) տառերով_____

Լրացուցիչ տեղեկություններ_____

ՀԱՆՁՆՈՂ՝

Կ.Տ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ_____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԸՆԴՈՒՆՈՂ՝

Կ.Տ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ (ՀԻՄՆԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ)
(ԼԻԱԶՈՐ ԱՆՁ) _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

_____
(պաշտոն, անձը հաստատող փաստաթուղթ)

ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Կ.Տ.

_____ _____
(ստորագրություն) (պաշտոն, անուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթուղթ)